

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՐԵԿՈՆ

Հակառակ աննպաստ եղանակին, պատկառելի թիով ներկաներ կը մասնակցեին Հ.Բ.Ը. Միութեան Մելգոնեան Կրթական Հաստատութեան Լիբրարիայի միջոցով:



նանի Սանուց Միութեան կազմակերպած՝ «Պահպանել Հայ Մշակութային Ժառանգութիւնները» նիւթով բանախօսական-գեղարուեստական երեկոյին:

Յայտագիրի գործադրութիւնը ներկաներու մասնակցութեամբ սկսաւ յոտնկայս՝ Մելգոնեան Կրթական Հաստատութեան քայլերգով: Յանուն Մ.Կ.Ը. Լիբրանի Սանուց Միութեան բացման խօսքը արտասանեց միութեան ատենապետ Տոքթ. Արա Իսկիկեան:

Յարգելի բժիշկը խիստ անորամբանական մկատեց Մ.Կ.Ը.-ը փակելու որոշումը, դիտել տալով, թէ ան ծանր բեռ մը նդած չէր Հ.Բ.Ը. Միութեան: Ընդհակառակը՝ ճիշդ տնօրինելու պարագային, ան կրնայ օգտակար հանդիսանալ հայկական այլ հաստատութիւններու: Տոքթ.

խօսքը արտակց շեշտելով, թէ Մ.Կ.Ը. իր առաքելութիւնը արտառած կը մկատէ, երբ ցեղասպան թուրքիա կը ճանչնայ պատմական այն ճշմարտութիւնը, որ ներկուած է մէկուկէս միլիոն հայ նահատակներու արիւնով, կը վերադարձնէ ու կը հատուցէ մեր քանդուած մշակութային կոթողներն ու հաստատութիւնները, մեր բռնագրաւուած հողերը: «Մի՛նչ այդ՝ քոյրս մէկ ուժ եւ բունցք Մելգոնեանի հետ եւ Մելգոնեանի համար», ըսաւ օրուան յարգելի բանախօսը:

Օրուան խորհուրդը փոխանցել է ետք, գեղարուեստական բաժինով, Տիկին Սիլվարդ Ֆազլեան ապրումով ասմունքեց Վահան Թէքէեանի «Անունդ» եւ Դանիէլ Վարուժանի «Մեծատր» բանաստեղծութիւնները: Յանուն անմահ Մելգոնեան եղբայրներու խօսք առաւ անոնց հարազատը՝ Տիար Ժագ Մելգոնեան, որ յատուկ հրաւիրով ժամանած էր Լիբրանան: Տիար Ժագ Մելգոնեան ըսաւ, թէ իրեն զարմանք կը պատճառէր Մելգոնեան Կրթական Հաստատութեան առնչութեամբ Հ.Բ.Ը. Միութեան ղեկավարութեան կողմէ ժամանակակից կամ փոխարինող տարբերակներ քննարկելու անզիջում կեցուածքը, Մ.Կ.Ը. Հաստատութիւնը փակելու եւ վաճառելու որոշումը, որ անյարիր է անմահ բարեբարներու կտակին: Հետեւաբար, ըսաւ ան, հարցը փոխանցուած է իրաւական մարմիններու: Սպկայն, Տիար Ժագ Մելգոնեան ցաւ յայտնեց իրաւաբանական մարմիններուն փոխանցուելիք գումարներուն, «էրբ կարելի էր հասկացողութեան զալով խնայել զանոնք եւ հոգայ Մելգոնեան Հաստատութեան մէջ նոր ծնաւոններու հաստատումը»:

